Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-720[16]-23.11.2023-ԱՍ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ»

ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-166-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածում «հաշմանդամային սայլակ» բառերը և դրանց բոլոր հոլովաձևերը փոխարինել «անվասայլակ» բառով և դրա համապատասխան հոլովաձևով, «հաշմանդամը» բառը՝ «հաշմանդամություն ունեցող անձը» բառերով:

Հոդված 2. Օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասում «հաշմանդամներին» բառը փոխարինել «հաշմանդամություն ունեցող անձանց» բառերով:

Հոդված 3. Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասում «հաշմանդամային սայլակներով» բառերը փոխարինել «անվասայլակներով» բառով: